

նորավիպագրի լուսագոյն յատկությունները երեւան կուգան մասնաւորապէս *Տան սէրին* մէջ: Ապահով իմ որ Զօլա աւելի լաւ չպիտի կրնար պատկերացնել այդ Կով Առաքելն ու իր շրջապատը: Նիւթին համար մարդուս մէջ բնագործէն զետեղուած անբան, անասնային սէրը, գերադրական յամառութեան այդ աստիճանով, չեմ գիտեր կարդացած ըլլալ ոչ մէկ տեղ: Զարդարեան իր հերոսին հոգւոյն թափանցած է եւ զանիկա մասնիկ առ մասնիկ, նեարդ առ նեարդ վերծանած, սքանչելի մագիստրոսութեամբ մը: Ի՛նչ անշտապ ու անդորր եղանակով եւ շարժանկարի մը հաւատարմութեամբը, մեր աչքին առջեւ կը պարզէ այդ առտընին եղերերգութեան դրուագները եւ առանց աղմուկի, առանց թատերական շոնդալից շարժումներու, վիպակը կը վերջանայ, իր սիրական տունէն առջաւտ բաժնուած Առաքելին արցունքներուն եւ անպէտ ու արգահատելի դիակին առջեւ՝ ընթերցողը յուզումէ դողացնելով: *Տան սէրը* կատարեալ եւ անթերի գործ մըն է: *Յեղին գաւակը* նոյնքան յաջող վիպակ մըն է: Հեղինակը համեմատապէս աւելի ժուժկալ եւ աւելի արագ է հոս իր արտայայտութեանը մէջ: Նիւթին պահա՛նջը թերեւս: Չարսանճաքէն, այսինքն դժոխքէն խոյս տուող հայուն բերուշանութիւնը անհնարին էր լուսագոյն կերպով պատկերացնել: Վրձինի մէկ քանի հարուածով Զարդարեան դիմացնիս կը տնկէ Վարդանը՝ իր ինկածութեան բովանդակ քստմնելի այլակերպութեանը մէջ: Ինկած թափառական այդ հայ պապուկին եւ յետոյ անոր մէջէն յանկարծ ծառացող պլացող վսեմ ու հերոսական հոգին հակադրութիւնը մեր ցեղին անկորնչելի ազնուութեան հազուագիւտ փառաբանութիւններէն մէկն է: Միակ դիտողութիւնը գոր ունիւմ այս վիպակին համար, այն է որ Չարսանճաքի գաւառին նկարագրութիւնը, մէկուկէս էջ, կարելի էր չորս հինգ տողի մէջ խտացնել: Այդ մէկուկէս էջը լիովին աւելորդ է: *Վա՛խ, ես մենտէի* եւ *Սեւ հարը կանչեց* վիպակներուն մէջ հեղինակը կնոջական անձնուիրութեան եւ ապականութեան բաղդատական հոգեբանութիւնը կ'ընէ: Դիտելի է որ Զարդարեան իր